«ԱՊԱՀՈՎՎԱԾ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՊԱՀՈՎՎԱԾ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-97-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 20-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«20) **Ծանրաբեռնված գույք՝** ապահովման միջոցների զամբյուղում գտնվող ակտիվների ապահովման միջոց հանդիսացող գույք։»

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածում.

1. 9-րդ մասում «դուրս գրված ակտիվները» բառերից հետո լրացնել «Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում» բառերը.
2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մաս.

«11. Օրենսդրությամբ ծանրաբեռնված գույքի նկատմամբ իրավունքների գրանցում նախատեսված լինելու դեպքում Կենտրոնական բանկի ներկայացմամբ այդ իրավունքի գրանցումն իրականացնող մարմնի կողմից օրենքի հիման վրա համապատասխան գրանցման համակարգում գրանցվում է ռեգիստրում գրանցված ապահովման միջոցի ապահովված իրավունքի տնօրինման սահմանափակում: Սահմանափակումը ծանրաբեռնված գույքով ապահովված անձի նախաձեռնությամբ կամ գրանցված իրավունքը ծանրաբեռնված գույքով ապահովված անձի կողմից տնօրինելու միջոցով, այդ թվում՝ ծանրաբեռնված գույքի սեփականատիրոջ հետ համաձայնություն կնքելու միջոցով, կարող է դադարել կամ փոփոխվել միայն Կենտրոնական

բանկի նախնական համաձայնությամբ: Ծանրաբեռնված գույքի նկատմամբ գրանցված իրավունքի՝ օրենքով նախատեսված այլ հիմքերով դադարելու դեպքում համապատասխան գրանցումն իրականացնող մարմինը գրանցված իրավունքի դադարման պահից մեկօրյա ժամկետում տեղեկացնում է Կենտրոնական բանկին: Սահմանափակման գրանցման, գրանցման փոփոխման և գրանցման դադարեցման համար պահանջվող տեղեկության ցանկը, ինչպես նաև Կենտրոնական բանկի և համապատասխան գրանցումն իրականացնող մարմնի միջև տեղեկատվության փոխանակման կարգը սահմանվում են Կենտրոնական բանկի խորհրդի և համապատասխան գրանցումն իրականացնող մարմնի համատեղ իրավական ակտով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության

նախագահ՝ **Վ. Խաչատուրյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի «**ակտիվներով ապահովված արժեթղթերի ապահովման միջոցներ (ակտիվների խումբ)՝**» պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Ծանրաբեռնված գույք՝** ակտիվների խմբում գտնվող ակտիվների ապահովման միջով հանդիսացող գույք.»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով.

«10. Օրենսդրությամբ ծանրաբեռնված գույքի նկատմամբ իրավունքների գրանցում նախատեսված լինելու դեպքում Կենտրոնական բանկի ներկայացմամբ այդ իրավունքի գրանցումն իրականացնող մարմնի կողմից օրենքի հիման վրա համապատասխան գրանցման համակարգում գրանցվում է ռեգիստրում գրանցված ապահովման միջոցի ապահովված իրավունքի տնօրինման սահմանափակում: Սահմանափակումը ծանրաբեռնված գույքով ապահովված անձի նախաձեռնությամբ կամ գրանցված իրավունքը ծանրաբեռնված գույքով ապահովված անձի կողմից տնօրինելու միջոցով, այդ թվում՝ ծանրաբեռնված գույքի սեփականատիրոջ հետ համաձայնություն կնքելու միջոցով, կարող է դադարել կամ փոփոխվել միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Ծանրաբեռնված գույքի նկատմամբ գրանցված իրավունքի՝ օրենքով նախատեսված այլ հիմքերով դադարելու դեպքում համապատասխան գրանցումն իրականացնող մարմինը գրանցված իրավունքի դադարման պահից մեկօրյա ժամկետում տեղեկացնում է Կենտրոնական բանկին: Սահմանափակման գրանցման, գրանցման փոփոխման և գրանցման դադարեցման համար պահանջվող տեղեկության ցանկը, ինչպես նաև Կենտրոնական բանկի և համապատասխան գրանցումն իրականացնող մարմնի միջև տեղեկատվության փոխանակման կարգը սահմանվում են Կենտրոնական բանկի խորհրդի և համապատասխան գրանցումն իրականացնող մարմնի համատեղ իրավական ակտով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության

նախագահ՝ **Վ. Խաչատուրյան**